ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի Փշատավան համայնքի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

1. Փշատավանի գյաղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի / ծածկագիր 3.1-3/.
ա) առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությանբ քաղաքացիների դիմում- բողոքները, բարձրացված հարցերը,
բ/ մշակում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը,
գ/ մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և միջոցառումներին:
դ/ ուսումնասիրում է քաղաքացիների դիմում - բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմավնած կարգով և ժամկետներում պատասխանում:
ե/ ունի համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:
զ/ քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին:
է/ իրականացնում է քաղաքացիների հերթագրումը քարտուղարի մոտ ընդունելության համար:
ը/ քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի , զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին:
թ/ քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:
ժ/ մասնակցում է համայնքի բնակչության , հատկապես երիտասարդության ռազմա -հայրենասիրական դաստիարակության գործընթացներին:
ժա/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորությունները:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն :
Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի իմացություն, ռուսերենի ազատ տիրապետում:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թվականի նոյեմբերի 25-ին ժամը 12.00-ին Փշատավանի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Փշատավանի գյուղապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1/ Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը տալուց/
2/ արական սեռի անձինք զին-գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային կցագրման վկայականի պատճեն:
3/ հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N-310-Ն որոշմամբ հայտարարության ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
4/ հայտարարություն այն մասին , որ ինքն դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
5/ մեկ լուսանկար 3*4 սմ չափսի:
6/ անձնագրի պատճեն:
ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:
Դիմումները ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից մինչև 17.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013 թվականի նոյեմբերի 13 -ը
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն:

Հեռախոս 2-76-49, 2-07-70, հասցեն ք. Արմավիր Աբովյան 71: 077-34-54-52

2.Արմավիրի մարզի Փշատավանի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ ծածկագիրը /3.3-1/
Իրականացնում է պաշտոնի անձնագրով լիազորություններ.
ա/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները:
բ/ հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականներին համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին , որոնց արդյունքների մասին զեկուցում աշխատակազմի քարտուղարին:
գ/ իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ , միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

դ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հախապատրաստում պատասխանը:
ե/ պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ գյուղապետարանից մուտքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար:
զ/ իրականացնում է աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների մուտքագրումը:
է/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
-ունի առնվազն միջնակարգ կրթություն.
-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի “բ” ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունը.
-տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն;
Մրցույթը կկայանա 2013թվականի նոյեմբերի 25-ին ժամը 12.00 Փշատավանի գյուղապետարանի շենքում:
Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2013թվականի նոյեմբերի 13-ը
ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 17.00,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Այլ տեղեկությունների համար դնմել Փշատավանի գյուղապետարան կամ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն՝
ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. 2-76-49, 2-07-70:
077-34-54-52